

Ե. ԾՈՒՑ ԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1.

Ծուկը ուտեմ, մուկը նետեմ,
Մուկը նետեմ, ծուկը ուտեմ ¹⁾։

2.

Մեր տունը կայ տասը տանձի ծառ,
Տասը տանձի ծառին ծալքը տասը ծանրը տանձ.
Ծեր տունը կայ տասը տանձի ծառ,
Տասը տանձի ծառին ծալքը տասը ծանրը տանձ։

Զ. ՅԱՆԳԱՒՈՐ ԽՕՍՔԵՐ

Քարոզ մը տամ, մտիկ ըրէ՛ք,
Ըթռախ վրայ տիտիկ ըրէ՛ք։

Խաչատուր,—
Հինգ փարալի փաչա տուր։

Ալէլուիա օրթի,
Ժամկոցին քիթը բրդի։

Վարդան,—
Մուկերը վրադ կարդան։

Հնթերցուածս առական,
Մուկը ծակէն էրևաց,
Պոչէն պունէ խած։

Այութին,—
Խալալէին խուրին,
Պալըխըին ⁴⁾ վերիդին,

Հնթերցուածս ի ցորայ,
Վուր պաշտնա պիւր սօփա ⁵⁾։

Կարապետ,—
Կարմիր վարպետ ⁶⁾,
Էկու ծեծեմ.

Թաղական խորհուրդ,
Քայմաբը եօղուրդ ⁷⁾,
Պողաչա, պեօրեֆ,
Ճիւերս կերէ՛ք։

Կնա վարպետ։
—
Ալի, Ալի ⁸⁾. —
Ք...ս պիրախդ հալի

¹⁾ Կրկնել մի քանի անգամ, քայց աշխատելով լըփոթուիլ և լըսել «մուկը ուտեմ, ծուկը նետեմ», եթէ պատտիկ որ բողբոջ շփոթուի, շուտաւելուկը կը վերջացնէ «ծուկը մուկը մէկ թաղա» և կամ «ծուկն ա նետեմ» ըսելով։

²⁾ Թարգմ. Զարկ գլխին մի բիր։

³⁾ Թարգմ. սերով մածուն, var թաղախ մը եօղուրդ ձեկ պնակ մը ծուն։

⁴⁾ Մեծ գերեզմանատան մը անունն է։

⁵⁾ Աւրիշ գաւառներու մէջ «կարպետ» բառ մը՝ որ Պօլսոյ բարբառին անծանօթ է։

⁶⁾ Տանկի անուն է։

